

մին : Օրինակի համար ջրոյ մէջ անկա-
րելի է զինքը բաղադրող ոչ ջրածինը
և ոչ թթուածինը ճանաչել . վասն զի
ջուրը՝ ջրածնի կամ թթուածնի յատ-
կուծիւններէն եւ ոչ մէկն ունի , եւ
իւր յատկուծիւնները բոլորովին տար-
բեր են :

(Շարունակելի :)



ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին , 1876 Յուլի 20 .

(Շարունակութիւն : տես թիւ 7 .)

Իսկ յամին 1827 իսպառ բարձաւ
Պարսից իշխանութիւնը յերեւանայ և
Այրարատեան աշխարհէն և անկաւ-
րնդ իշխանութեամբ Ռուսաց , որպէս
և է ցորդ : Պէտք է գիտնալ թէ Օս-
մանցոց իշխանութեան ժամանակ ըստ
խնդրոյ Էջմիածնի Ս . Կաթողիկոսաց ,
Սուրբանքն ժամանակ առ ժամանակ
հրովարտակներ և վաւերական գրեր
տուած են Էջմիածնի գիւղորէից , կա-
լուածոց , արտօրէից և այլ ստացուե-
ծոց մասին , ինչպէս որ Սիմոն Կաթո-
ղիկոս կը յիշէ Զամբր անուանեալ
գրքին մէջ . թերեւս այս գրեանքը Ս .
Էջմիածնի գիւղանը սահուած լինին , թէ
և կ'ըսուի թէ շատերը կորսուած են .
Երեւան քաղաքը միայն երկու ժամ
կենալով մեկնեցանք : Ճանապարհը
խիստ վատ , մանաւանդ սարտեղնե-
րուն մէջ , ուր տեղ տեղ ջուրերը խո-
խաջ ալով կրննթանան սարտեղները , Կա-
ռուղին մինչ յերեւան չիմուած է , իսկ
անախ մինչև Էջմիածին չէ շինուած . այս
խորդարորդ ճանապարհը հաղիւ 3 ժա-
մէն հատանելով , ահա վանօրէից կա-
թողիկէները երևեցան . Սեպտեմբեր 5
Կիւրակէ կէս օրին մտանք 'ի Սուրբ

Էջմիածին , եւ հիւրընկալեցին զմեզ
Ղաղարապատ կոչեցեալ հիւրաստանն .

Հայաստանի թագաւորանիստ Վա-
ղարշապատ Մարաբաղաքը՝ Արարա-
տեան դաշտին կեդրոնը շինուած է քաղ-
այն Արշակունի ճոխութեանց կամ թա-
գաւորական պալատներէն , իշխանաց
և նախարարաց շինուածներէն , կամ
պարսպաց և աշտարակաց բեկորներէն
և ոչ մի նշոյլ կամ նշմարանք անգամ
չեն երեւիր , այլ նոյն քաղաքին տեղ
այժմ կը տեսնուի 700 տունէ բաղա-
յեալ գիւղ մի Հայաբնակ , հին քաղա-
քին անուամբ , տուները կաւակերտ
և աղիւսաշէն , շատերը ցած և անշուք ,
փողոցները նեղ և աղանդի , տեղ տեղ
ուռի և բարախ ծառեր անկած . գիւ-
ղացիք ունին մի ծխական Եկեղեցի , զոր
Մատթէոս Ս . Կաթողիկոսը հինն քա-
կելով դայս 'ի հիմանէ նոր կառուցած
է , ունին վարժարան երկուս աշակեր-
տաց ընդ հսկողութեամբ ձեմարանի
տեսչութեան , բնակիչք երկրագոր-
ծութեան , մշակութեան արհեստի և
առեւտրական գործոց կը սարապին .
աստ կը նստի Գաւառապետը (Նէլէրիկ)
և դատաւորը և սոխաւածիւ զօրք :

Արդի գիւղին հորաւային կողմը
կ'յնայ Ս . Էջմիածնի վանքը շուրջնակե-
անեփ և թրծեալ աղիւսով պարսպած
խիտ առ խիտ բուրգերով յաւուրս
Սիմէանի Կաթողիկոսի Երեւանցոյ և
այլոց , շինողաց և բարերարաց յիշա-
տակարանները բուրգերուն վերայ կը
տեսնուին Եկեղեցին կեդրոնատեղինէ .
Իջման տեղւոյն վերայ կամբառնայ սը-
րածայր կաթողիկէ մեծ գմբէթը և շի-
նուած է սեղան խորհրդոյ յաւուրս
Եղիազարու . այլ յետոյ Աստուածա-
տուր Կաթողիկոս Համատանցի վերըս-
տին պայծառացուցած է չորս միաձոյ-
մարմարին սեանց վերայ կառուցանե-
լով փոքրիկ կաթուղիկէ և չորսպատը

վանդակի պղնձեայ . քառակուսի փոքր
զանգակատունները շինուած են յաւու-
րըս Եղիազարու , իսկ արեւմտեան մեծ
զանգակատունը , որ Եկեղեցւոյ աւագ
դրան վերայ է , շինուած է յաւուրս Փի-
լիպոս և Յակոբ կաթողիկոսաց սքան-
չելի և նուրբ քանդակներով , Եկեղեց-
ւոյ շրջապատը բաց է իբրեւ ծաղկոյ
և դրախտ , և ապա քառակուսի ձե-
ւով շինուածք , արեւմտեան կողմն
վեհարան , հիւսիսայինն՝ միաբանաց
խցերն , արեւելեանն՝ երբեմն վարժա-
րան և այժմ տպարան , հացի փուռ
և այլ կարեւոր տեղիք . հարաւայինն՝
սեղանատուն , խոհանոց , տնտեսարան
մօրան , սառնատուն , շտեմարան ցո-
րենայ և բրնձի և այլ կարեւոր պիտո-
յից . դարձեալ հարաւային կողմն է
Ղազարապատը , որ միջնադրով մի կան-
ջրպետի , շինեալ յաւուրս Ղազար կա-
թողիկոսի Զահեղեցւոյ , ուր կ'ընդուն-
ուին տա հաափրակ հիւրեր , վանքին
մէջ արեւմտեան կողմը կրվագէ երկ-
բերան աղբիւր Գանգան անուանեալ
չրէն մաս մի խողովակներով բերուած ,
վեհարանի արեւմտեան կողմն է պար-
տեղ և հարսւոյ նորին Սինոգատեղին ,
որոյ դիւանին մէջ կայ Ռուսաց կայսեր
պառկերը և Տէրութեան օրէնքը ներ-
կայացնող (շէրճալը) , որոյ առջեւ ան-
դամք և այլք երգման արարողութիւ-
նը կը կատարեն Խաչիւ և Աւետարա-
նաւ , հաւատարմութեամբ վարել ի-
րենց պաշտօնը և հաւատարիմ մնալ
Տէրութեան : Բաց ՚ի Սինոզի անդամ
ներէն , որոնք կը բաղկանան 4 Եպիսկո-
պոսներէ և 2 Վարդապետներէ , որոշ-
ուած է Տէրութեան կողմէն մի փոխա-
նորդ Բրդէլ-բեօր և մի ատենադպիր և
այլ 15 ի չափ քորտուղար և մի թարգ-
ման հաթողիկոսարանի , բաց ՚ի յԵկե-
ղեցականոց՝ սոցա ամառականը Տէրու-
թեան կողմէն կը վճարուի : Եստեղ հա-

մար զանազան սենեակներ որոշուած է ,
ուր իւրաքանչիւրք իւր որոշեալ պաշ-
տօնին համեմատ կը գործէ : Վանքին
հիւսիսային կողմն արտաքոյ պարսպին
է Պալուար կոչուած փոքրիկ տնտառ ,
որ Բէիզեան Մկրտիչ Պէյի այն տեղ
գտնուած ժամանակ տնկուած է , որոյ
մէջ կան պողտոտու ծառեր եւ շրջա-
պատը պատասխարուած է . գիւղին ա-
րեւմտեան կողմն է վանքին մեծ վա-
ճառանոցը , զոր Մատթէոս Կաթողի-
կոսը վանքին պարսպի միջէն հանելով
այն տեղ փոխադրած է :

Վանքին հարաւային կողմն է մեծ
լիճը զոր Ներսէս Ե . Աշտարակեցի
Կաթողիկոսը շինել տուած է , երկայ-
նութիւնն 250 քայլ , իսկ լայնութիւնն
100 . սորա ստորոտն է յիշեալ Կաթո-
ղիկոսի սնկել տուած մեծ անտառը և
բանջարեղինաց տեղը , որոյ վերայ մէկ
մաս աւելցուցած է Մատթէոս կաթո-
ղիկոսն , նայնչափ ևս այժմեան Գէորգ
Գ . Սրբազան՝ կաթողիկոսն տնկել տը-
ւած է , բայց տակաւին զարգացած չէ ,
և ամբողջ անտառին շրջապատը պա-
րըսպած է ասպագոյ վտանգներէն զերծ
մնալու :

Սոյն անտառին արեւելեան կողմն է
Գայիանէի վանքը , Եկեղեցին կոմսածու
քարամբք շինուած , որոյ կեդրոնը կամ
բառնայ սրածայր գմբէթը , աւագ սե-
ղանը յաջ և յահեակ փոքրիկ պահա-
րաններ ունի , հարաւային պահարա-
նէն անցուկ ճանապարհաւ կ'իջնայ ա-
ւագ սեղանի ներքեւ , ուր է գերեզ-
ման սրբուհւոյն Գայիանեայ . Եկեղեց-
ւոյ հիււթիւնը ինքնին յայտնի է . այ-
ժըմ՝ նորա տեսչութիւնը յանձնուած
է Տփիսիսեցի Պատառմեան Վահան
վարդապետին , սա Եկեղեցին փոքր ի-
շատէ նորոգած է , և դաւիթը քանի
մի սենեակներ նոր շինել տալով , եւ
ունի փոքրիկ տպարան մի , Եկեղեցւոյ

գաւիթը կը տեսնուին Կաթողիկոսաց գերեզմաններն արձանագրութեամբ, Աստ թաղուած է նաեւ Եղիազար կաթողիկոսն, որ զինի վախճանի Յախոբ կաթողիկոսի միաբանք էջմիածնի խնդրանքով բերին յԵրուսաղէմէ և նըստուցին յԱթու Հայրապետութեան, և վախճանած է ՌՃԼԹ թուին. սա իւր կենդանութեան նորոգած է Գալիսոնէի վանքը շրջապատը պարսպելով և միաբանաց խցեր և Եկեղեցւոյ գաւիթը երկու խորան շինելով յանուն Առաքելոյն Պետրոսի և Պաղոսի ՚ի թուին ՌՃԼԵ, ինչպէս կը տեսնուի արձանագրութենէն: Սորա մերձ է Փլլան կոչեցեալ Գոմատունն, կորի ընդարձակութեամբ շինուած, եւ ունի չորս դուռ խաչաձեւ և կարեւոր սենեակներ, ունի մի վարդապետ վերատեսուչ, որոյ հրամանին կը հնազանդին բոլոր մշակք և գործաւորք. աստ կը մակաղին հօտ ոչխարաց, նախիրք անդէտ և ջուրք անասնոց ՚ի պէտս երկրագործութեան. կառք և երիվորք այլովքն հանգերձ. աստի կըմատակարարուի տարեկան տէտք վանականաց, իւղ, պանիր, կաթն, առատ ցորեան և այլ սերմանելի ընտելէններ. բաց ուրիշ կենդանիներէն կը դարմանեն նաեւ երամակ խոզից:

Վաղարշապատ գիւղին արեւելեան կողմն է հնձանատեղի կուսանաց փոքրիկ աւերակ մատուռն, որոյ սրբատաշ քարանց հիման վերայ կը շինեն իւր հին դիրքովն կաւակերտ մատուռ: Սորա մերձ է Շաղախաթ անուանեալ վանքն, անեւի աղիւսէ պարսպեալ, արեւմտեան կողմը կ'տեսնուի արձանագիր մի այսօրինակ՝ ՇԻՆԵՏԱԻ ՀՆԶԱՆԵԱՅ ՄԱՏՈՒՌՈՒ Ի ԹՈՒԻՆ ԶՃԵԻ Գ. Կ'երեւի թէ սոյն քարը յիշեալ մատուռէն բերուած աստ դրուած է: Եկեղեցին կոխածոյ քարամբք ՚ի հիմանէ շինուած է յա-

ւուրս Նահապետ կաթողիկոսի ձեռնասուն աշակերտին Եղիազարու, արդեամբ Շաղաթեցի Աղամալ իշխանին. մէջ տեղը կամբառնայ սրածայր գրմբեթը, ունի մի սեղան, յաջ և ահեակ փոքրիկ մատուռներ. հարաւային մատուռն մէջ ցոյց կուտան Մարիանեայ կուսին գերեզմանը, որ հիւանդագին գոլով իւր ընկերաց հետ նահատակութեան ասպարէզը չէր կարողացած երթալ, այս տեղ ընդունած է նահատակութեան պսակը, ունի և զանգաւորներ ՚ի վերայ դրան Եկեղեցւոյ, և աստ է Նահապետ Կաթողիկոսի գերեզմանը, որ վախճանած է ՌՃԽԹ թուին. դրան բարաւորին վերայ է Եկեղեցւոյ շինութեան մեծ արձանագրութիւնը. ունի շրջապատը խցեր և պարտէզ, և մի աշխարհական պահապան:

Սոյն վանքի արեւելեան կողմը քիչ հեռաւորութեամբ է յանուն Հռիփսիմեայ և ընկերաց նորա կառուցեալ վանքն. Եկեղեցին քարաշէն և գմբեթաւոր վերոգրեալ Եկեղեցեաց նման զանգակատունով. Աւագ սեղան եւ երկու փոքրիկ աւանդատուն, հիւսիսային աւանդատունէն նեղ և անձուկ մուտքով և երեք աստիճանաւ Աւագ սեղանի ներքեւ կ'ընայ, ուր է փոքրիկ մատուռ մեծամեծ քարամբք շինեալ, աստ ամփոփուած են նշխարք սուրբ Հռիփսիմեայ և ընկերաց նորա, տախաւին կ'երեւի Լատին կղերաց Սրբոց Նշխարքը դադանսլու համար քանդած սրմը մեծամեծ քարեր հանելով: Այս Եկեղեցին նորոգած է Տ. Կոմիտաս կաթողիկոսն, ինչպէս կը վերահայն Աղգային Պատմագիրք, և նորա գերեզմանը ցոյց կուտան աւանդութեամբ Եկեղեցւոյ բեմին օռջեւ, առանց տապանագրի և արձանագրութեան: Հիւսիսային կողմը թաղուած

ե ֓իլիպոս կաթողիկոսը, գերեզմանը յայտնի է տապանաքարիւ և արձա- նագրութեամբ, վախճանեալ 'ի թը-ւին ՌՃԴ, արժան կը համարիմք միայն զանգակատան յիշատակարանը աստ դնել:

Զանգակատունս այս յիշատակ իւր կանգնեալ, Աշխւ Աղա Խաչիկ ի իննսն պերճացեալ, Որ էր տոհմիւ քաջ Զնթու մեան գովեցեալ, Որքի Պարոն Առաքելի յատկացեալ:

Նոր Զուղայու 'ի Հնդիկս գնացեալ, Ի Կալկաթայ մեծ քաղաքի բնակեալ, Առ եւ գործով պարծանք Ազգի երեսեալ, Ի բաղում աղցս բարի անուամբ հաշակեալ:

ՅԱնգլիացւոց թաղաւորէն օժտեցեալ, Ռսկեայ մանեակ եւ պատկերաւ պսակեալ, Իսկ զկնի վախճան բարի բնկալեալ, Ոայ ընդ Զայի Ղասն 'ի վերայ յաւելեալ, Այս ինքն է թիւ Փրկչին ՌՁԳ — 1790:

Վանքը ունի քանի մի սենեակ և մի վերատեսուչ վարդապետ. չըջա- պատը բաւական ընդարձակութեամբ այգի և պարտէզ, և Եկեղեցւոյ ետեւի կողմը գերեզմանք վարդապետաց ո- մանց:

Արարատեան դաշտին հարաւային կողմն է, համանուն Արարատ կամ Մասիս լեռը, որոյ բարձր և անմաս- չեղի սոյիտակափսռ գլուխը մշտնջենա-ւոր ձիւնով պսակուած է, ամառնա- յին օտթը որ դաշտին բնակիչքը խիստ կը տագնապէ, նորա դարուց 'ի դարս թանձրացեալ ձիւներուն երբեք աղ- գեցութիւն չընէր, և նորա յարատեւ ձմրան խստութիւնը չէ կարող մեղմա- ջընել, սորա ստորոտն էր երբեմն Ա- կոսի գիւղը, և իւր գօտիններուն վերայ շինուած էր Սուրբ Յակոբայ վանքը, բարեհամ աղբիւրով, այլ 1840 թուին պատահած շարժէն Մասիս լեռան մի մասը և ձեան ահագին բեկորներն մեծ գղղմամբ ինկալով՝ վանքը և Ակոսի գիւղը բոլորովին ծածկեց իրենց բնա- կիչներով և անասուններով, այժմ կը լսուի թէ վրանաբակ Գուրգը նորա

աւերակները փորելով իրատակաց տա- կէն կահ կարասիքներ կը գտնան, այս լեռան մօտ կ'ամբառնայ գմբեթաձեւ փոքր Մասիս կոչուած լեռը, բայց ոչ նոյնչափ բարձր, սորա գագաթը կա- րելի է ելլալ, ուր կ'աւանդեն թէ կան հին գերեզմաններ, Մասիս լեռան չըղ- թաները կը ձգուին դէպ յարեւմուտս, և միւսն դէպ յարեւելս մինեւ Կով- կասեան լեռանց գօտիները. իսկ դաշ- տին հիւսիսային կողմը կ'ամբառնան Արագած լեռան երկար շղթաներն, ու- ռոյ գագաթունքն եւս թէեւ ամրան ձիւնապատ, բայց ոչ որպէս Մասիսն, Այս լեռան ստորոտներն են Բիւրա- կան գիւղն, Անբերդ կոչեցեալ ամրո- ցըն, և այլ աւերակ վանօրայք և ամ- րոցք, 'ի Բիւրական շինած է Գէորգ Դ. Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց յատուկ ամարանոց, ուր կան- ցունէ ամառնային եղանակը. օղը բարեխառն, ջուրը խիստ զով եւ ա- ռողջարար, հանդէպ սորա կ'երեւի Արայի լեռը ոչ այնչափ բարձր, որ այլադէք կը կոչեն Գառնը Եարդգ մէջ- տեղէն պատառուածք մի նշմարուե- լուն: Իսկ արեւելեան կողմը խիստ հեռուէն կ'երեւին Գեղամայ գաւա-ռին լեռները, այսպէս Արարատեան դաշտը չորս կողմէն գրեթէ լեռներով չըջապատած է, այսքանս բաւական համարելով ժամ է արդ նոր շինուած- ները նկարագրել:

(Շարունակելի)

Երեսուցի 1877 Օգոս. 28:

... Խմբագիր Սիօն ազգօգուտ թերթին:

Օսկերլաթոյն Թրիւնիւնիս Խտալերէն լրագրոյն թիւ 167 թերթին մէջ կար-